Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ

ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

Մենք, Հայոց ալեզարդ Հայրապետս, հայ հոգեվորականության եվ Սովետական Հայաստանի ու Սփյուռքի հավատացյալ ժողովրդի հետ միասին, ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձեր ծննդյան 70-ամյակը:

Մեծանուն Լենինի եվ Ձեր շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք բերեց իր ազատությունը եվ քաղաքական անկախությունը: Հայ ժողովուրդը իր նվիրական ընաշխարհում եվ հարազատ պետության մեջ այնքան ծաղկեց եվ բարգավաճեց, որ ի վիճակի գտնվեց Հայրենիքի հյուրընկալ դռները լայն բաց անել Սփյուռքի տարագիր եղբայրների առաջ: Հայ ժողովրդի լավագույն զավակների իղձն է այժմ, որ Սովետական ազատարար ալեվը ծագի նաեվ Հայաստանից անիրավորեն անջատված հայկական հողերի վրա եվ Սփյուռքի ողջ հայությունը ի վիճակի լինի վերադառնալ իր սրբազան Հայրենիքը —Սովետական Հայաստան:

Ս. Էջմիածնի հնադարյան Մայր Տաճարի սրբազան կամարների տակ այսօր եվ հանապազ ջերմեռանդ աղոթքներ ենք վերառաքում Ամենաբարձրյալին, որ Ձեր կյանքը — մարդկության քարեկամ Մեծ մարդու կյանքը առողջ եվ երկար պահի, որպեսզի աշխարհում տեվական խաղաղություն եվ ազգերի մեջ եղբայրություն հաստատելու Ձեր վեհագույն իղձը մարմին առնի եվ իրականանա:

ԾԱՌԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ—ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ